Արմինե Մանասյան
Եվրասիա միջազգային համալսարանի
հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժնի պատասխանատու

ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ*

Սույն հոդվածում ներկայացված է պետության դերը բարձրագույն կրթության կառավարման գործընթացում, լայնորեն վերլուծվել է Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության՝ որպես ընդհանուր կրթության բաղկացուցիչ մասի կառավարման համակարգը, ընդգծվել են այդ համակարգի կառավարման հիմնահարցերը, առաջարկվել են դրանց հաղթահարման մեխանիզմներ:

Հիմնաբառեր. պետություն, բարձրագույն կրթություն, ռազմական կրթության կառավարում, հիմնախնդիրներ, Բոլոնյան գործընթաց:

Ջինվորական ծառայությունը գործունեության առանձնահատուկ ոլորտ է, որում անձնակազմին ներկայացվող պահանջներն իրենց բնույթով տարբերվում են գործունեության այլ տեսակներից: Այդ գործունեությունը սկսվում է թերևս ուսումնական հաստատությունից, որտեղ, չնայած իրականացվող բարեփոխումներին, այդուհանդերձ առկա են որոշակի բացեր, որոնք վերաբերում են ոչ միայն պաշտպանական գերատեսչությանը, այլ նաև պետության ընդհանուր կրթական համակարգին: Կրթության դերը աշխարհում և առանձին երկրներում այլևս անվիճելի է, քանի որ հասարակության կրթական մակարդակով է երաշխավորվում ազգային և համամարդկային արժեքների պահպանումը:

* Ներկայացվում է 2018թ. մայիսի 29-ին ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում տեղի ունեցած «Ռազմաուսումնական հաստատություններում ռազմական մասնագետների պատրաստման հիմնախնդիրները» կուրսանտական 15-րդ գիտաժողովի ընթացքում քննարկված նյութերի հիման վրա:

Ընդհանուր առմամբ բարձրագույն մասնագիտական կրթությունը կարելի է բնութագրել որպես որոշակի մասնագիտական գործունեության յուրացման գործընթաց և միաժամանակ՝ արդյունք, քանի որ ցանկացած ուսումնական հաստատության և մասնավորապես ռազմական ուսումնական հաստատության կրթական գործունեությունը ուղղված է վերջնական հումքի՝ շրջանավարտ-մասնագետի ստեղծմանը: Ս.Ա Մացակևիչը այն բնութագրել է որպես պետության կառավարման կառույցների և հանրային ինստիտուտների բարդ, բազմաֆունկցիոնալ և հատուկ կազմակերպված համատեղ գործունեություն, որն ուղղված է երկրի կրթական համակարգի արդյունավետ գործունեության բարելավմանը[1]: Պետությունը և բարձրագույն ուսումնական հաստատությունը կրում են փոխկապակցված պատասխանատվություն կրթության որակի համար: Համալսարանը, տալով բարձրագույն կրթության մասին դիպլոմ՝ ի դեմս պետության, հաստատում է, որ շրջանավարտն ունի գիտելիքի անհրաժեշտ մակարդակ, իսկ պետությունը՝ որպես հասարակական շահերի պաշտպան կրթության ոլորտում, փորձում է ապահովել այն պայմանները, որոնք նպաստում են կրթական համակարգի բնականոն գործունեությանը: Պետության հիմնական խնդիրն այս պարագայում արդյունավետ գործող կառավարման համակարգի ապահովումն է՝ պետության և հասարակության շահերին համապատասխան: Ներկայումս բազմաթիվ պետություններ որպես օրակարգային խնդիր են դիտարկում գիտելիքների վրա հիմնված հասարակության ձևավորումը, որտեղ գիտելիքները ստեղծվում են տեղեկատվական ռեսուրսների և բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ, տարածվում և արդյունավետ օգտագործվում են բոլոր ոլորտներում, քանի որ կրթված անհատներից բաղկացած հասարակությունն առավել պաշտպանված կարող է լինել արագ փոփոխվող և գլոբալացվող աշխարհի մարտահրավերներից: Այս դեպքում ծրագրային հզոր միջոցների զարգացումը բերում է ստեղծագործական, ինքնուրույն հետազոտական, կառուցողական, նորարարական աշխատանքի ունակ մասնագետների պահանջարկի աճին: Համալսարանների, այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատությունների, առաջնային խնդիրը դառնում է, ժամանակի մարտահրավերներին համապատասխան, բանիմաց մասնագետների պատրաստումը, ինչն էլ իր հերթին ստեղծում է պետության անվտանգության ամրապնդման կայուն հիմքեր: Պետության կողմից կրթության վրա կատարված ծախսերը դիտարկվում են որպես ներդրումներ, քանի որ դրանք անհրաժեշտ են մարդկային կապիտալի վերարտադրության և կայուն զարգացման համար[2]:

Այդուհանդերձ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհերը գործնականում չեն կարողանում լիարժեք իրականացնել իրենց իրավասությունները մի շարք ուղղություններով տարբեր պատճառներով: Նախ այն, որ բուհերը զգալի կախվածություն ունեն ՀՀ կրթության և գիտության

1 Տե՛ս Мацекевич С.А, "Менеджмент в системе образования: теория и практика инновационной подготовки профессионалов", Минск, Издатель И.П.Логвинов, 2011 , (серия Universitas Ludens), էջ 19:
2 Տե՛ս Բարխուդարյան Գ.Ա., ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման տնտեսագիտական արդի հիմնախնդիրները, ատենախոսություն, Երևան 2016, էջ 27

նախարարությունից: Ռազմական կրթությունը ևս, համարվելով ընդհանուր կրթության բաղկացուցիչ մաս, բնականաբար իր գործառույթներում ուղղորդվում է ՀՀ կրթության մասին օրենքի դրույթներով: Ռազմական բուհի կառավարման աշխատանքի բովանդակությունն ու կազմակերպումը կրթության և գիտության նախարարության ղեկավար փաստաթղթերի հետ միասին որոշվում է ՀՀ ՊՆ հրամաններով, ցուցումներով և այլ իրավական փաստաթղթերով ու ձեռնարկներով: Մինչդեռ համաշխարհային փորձում գնահատվում է բուհերի բարձրաստիճան ինքնավարությունը, քանի որ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, մի շարք երկրներում առաջնային շատ հարցեր կարգավորում են հենց իրենք՝ բուհերը:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ վերջին տարիներին զգալի նվազել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակը[1]: Այս հիմնախնդրի պատճառներից մեկը արտագաղթն է՝ վերաբնակեցման երկարաժամկետ հեռանկարով: Այս փաստը, ինչ խոսք, չէր կարող իր անդրադարձը չունենալ նաև բարձրագույն կրթության ոլորտի վրա: Հետազոտությունները ցույց են տվել, որ մեկնողների խմբի զգալի հատվածի տարիքային շեմում 21–28 տարեկան երիտասարդներն են, ովքեր մեկնում են ԵՄ երկրներ, ԱՄՆ և ՌԴ[2]: Եվ չնայած արտագաղթի մեծ ծավալներին, ի տարբերություն այլ երկրների, ՀՀ–ում բարձր է երեխաների կրթության նկատմամբ առանձնահատուկ մոտեցումը:

Արտագաղթի պատճառով ռազմական ուսումնական գործընթացում ներգրավվածների թվի նվազումը առավել լուրջ հիմնախնդրի առջև է կանգնեցնում պետությանը, քանի որ գործ ունենալով բանիմաց մասնագետների թվաքանակի անկման հետ՝ պետությունը վտանգի տակ է դնում իր վաղվա անվտանգությունը: Այս տեսանկյունից վերջիններիս ՀՀ կրթական համակարգում ներգրավելու և ուսուցման գործընթացը online դաշտ տեղափոխելու համար բուհից և դասախոսական կազմից պահանջվում է մշակել շփման նոր ռազմավարություն: Անհրաժեշտություն է առաջանում մշակելու հեռահար ուսուցման համար նախատեսված փաստաթղթերի էլեկտրոնային շտեմարան, և առհասարակ՝ բուհերը հագեցնելու նորագույն տեխնոլոգիաներով՝ ներգրավելով այդ տեխնոլոգիաները տիրապետող մասնագետներին: Այս ամենն իր հերթին պետությունից պահանջում է նոր ծախսեր և ներդրումներ:

Որպես կանոն, ապագա կուրսանտների ընտրությունը կատարվում է՝ գործող օրենքների համաձայն, սակայն հանրակրթական դպրոցներում

1 Տես http://www.armstat.am/file/doc/99504343.pdf, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից բնակչության միգրացիայի (հաշվառում/ դուրս գրում) վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված տվյալները ենթարկվել են վերագնահատման (վիճակագրական ճշգրտման)՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք ամբողջապես չեն ընդգրկում բնակչության տեղաշարժերը (քանզի մարդիկ հիմնականում տեղաշարժվում են առանց ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը տեղեկացնելու)՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով ստացված միգրացիայի գնահատականները:

2 Տես Եվրասիա միջազգային համալսարանի Արտաքին և ներքին միջավայրի վերլուծություն 2014, http://eiu.am/wp/wp-content/uploads/2016/06/Internal-and-External-factor-asessment.pdf (մուտք 14.03.2018):

ստացած գիտելիքների ցածր մակարդակը բացասական ազդեցություն է գործում ռազմական բուհի ուսումնական գործընթացի վրա: Այդիսկ պատճառով ուսումնառության առաջին ամիսներին հանդիպելով զինվորական ծառայության հետ կապված դժվարությունների և օրեցօր ավելացող կրթական պահանջների՝ ոմանք հրաժարվում են շարունակել հետագա ուսումը: Այս առումով օրինակ՝ Մեծ Բրիտանիայում լայն տարածում է գտել պարապմունքների «տյուտորական» համակարգը (tutor), որը իրենից ենթադրում է ավագ կուրսեցու կողմից կրտսերների համար դասախոսությունների կազմակերպում՝ դասախոսությունների կամ սեմինարների բովանդակությունը խորացնելու նպատակով[1]: Այսպիսի մեթոդով ուսումնառությունը նպաստում է ոչ միայն կուրսանտի մեթոդական պատրաստվածությանը, այլ նաև գիտելիքների ավելի արդյունավետ յուրացմանը: Կուրսանտների ընտելացման ժամանակահատվածում առաջացած դժվարությունները հաղթահարելու նպատակով խնդիր է դրվում ուսումնական ծրագրում ավելացնել այնպիսի պարապմունքների քանակը, որոնց ընթացքում կզարգանան կուրսանտների ինքնուրույն ակտիվությունը, ստեղծագործական մտածելակերպը, նախաձեռնողականությունը, խիզախությունը, պատրաստակամությունը, ինքնուրույն որոշում կայացնելու և այլ ունակություններ, ինչն էլ կընդլայնի ապագա սպայի՝ որպես առաջնորդ կայանալու հնարավորությունները[2]:

Վերջին տարիներին ՀՀ կրթության բնագավառում զգալիորեն ավելացել են նաև միջազգային համագործակցությունները, որոնք կազմակերպվում են ՀՀ օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան: Անդամակցելով Բոլոնյան գործընթացին՝ բարձրագույն ռազմական կրթությունը խնդիր ունի նաև համաեվրոպական Բոլոնյան գործընթացի բոլոր դրույթները կատարելապես կյանքի կոչելու հարցերում փորձագիտական օժանդակության տրամադրման: Առանձնահատուկ խնդիր է կրթության կառավարման մասնագետների, ժամանակակից մարտահրավերներին համապատասխան, նպատակային պատրաստումն ընդհանուր առմամբ, որտեղ պրոֆեսորադասախոսական և կառավարող անձնակազմը կարիք ունի դասավանդման նոր մեթոդաբանության և տեխնոլոգիաներին տիրապետելու: Թերի է գործում նաև մանկավարժների մասնագիտական առաջխաղացման համակարգը, իսկ միջազգային գործընթացներին ներգրավվածությունն իր հերթին առաջադրում է խնդիրներ՝ ապահովելու լեզվական և միջմշակութային շփումների դժվարությունների հաղթահարումը: Մինչդեռ գլոբալիզացիայի արդյունքում առկա է անգլերենով դասավանդող մասնագետների պակաս:

Այս տեսանկյունից ռազմական կրթության բնագավառում պետք է ընդլայնել միջազգային համագործակցությունը, ինչպես նաև ներգրավել կուրսանտներին կարճաժամկետ փոխանակման ծրագրերում:

---

1 Տես Պետրոսյան Հ.Հ, Կրթության ժամանակակից համակարգեր. Ուսումնական ձեռնարկ: Լուսաբաց հրատարակչություն-Եր. 2005, էջ 21:

2 Տես Հովհաննիսյան Հ., Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կրտսեր սպայական կազմի մեջ առաջնորդին բնորոշ հատկանիշների ձևավորման հարցերի շուրջ, http://www.eiu.am/files/2016/2987_7.-Hayk-Hovhannisyan.pdf (մուտք՝ 16.04.2018):

Ամփոփելով փաստենք, որ կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու մատչելիության ապահովումը, իսկ բարձրակարգ ռազմական մասնագետներ պատրաստելը երկրի պաշտպանական ռազմավարության գործընթացի կարևորագույն խնդիրներից է:

Армине Манасян
Ответственный по связям с общественностью и рекламе
в Международном университете Евразия

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ВОЕННЫМ ОБРАЗОВАНИЕМ

В этой статье представлена роль государства в процессе управления высшим образованием, широко проанализирована система управления военным образованием Республики Армения как часть общего образования, подчеркнуты проблемы управления данной системой, предложены механизмы их преодоления.

Ключевые слова: государство, высшее образование, управление военным образованием, проблемы, Болонский процесс.

Armine Manasyan
Responsible for the division of Public Relations and Advertising,
Eurasia International University

THE ISSUES OF MILITARY EDUCATION MANAGEMENT

This article describes the role of the state in the process of higher education management, there has been made an analysis for Military Education Management System of the Republic of Armenia as an integral part of general education. The managerial issues of that system has been highlighted and have been proposed mechanisms for their overcoming.

Key words: state, higher education, military education management, issues, Bologna process.